

ԵՂԵՒԻՆԻՆ ՏԱԿ

(Շար. տես Բազմ. 1990 էջ 271)

Է.

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ՄԵՆ ԱԻՈՐ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ինչո՞ւ այս ձեր խոսված ո՞վ կենցաղասերներ, զու՞ք կապուած նիւթին և աշխարհին, ինչո՞ւ այս ձեր ողբը յուսալքուած: Ինչո՞ւ բարձրէն կը թռչի՞ք ո՞վ ունայնամիտ իմաստասէրներ. Ի՞նչ է այդ ձեր տքնութիւնը, Ի՞նչ կը հաւաքէք ո՞վ անկուշտներ, ո՞վ փափկութեան ստորկներ: Ինչո՞ւ կը կողոպտէք բռնաւորներ, իշխողներ: Ինչո՞ւ սարսափած կը դողաք երկրտոներ, վատարտեր:

Ունայնութիւն է խորհուրդը և գործը. ունայն են արուեստներն ու գիւտերը, գիտութիւնն ու օրէնքը, զրօսանքն ու զրազանքը, փափաքն ու փափաքելին, բոլորը բոլորը որ Յիսուսի հոգւոյն շունչը շունին, որ չեն չափուած անոր կշիռով, և ոչ անոր ձեռքով մատնանշուած: Բոլոր գիտութիւնները պէտք է անոր ճշմարտութեան փորձաքարին դրուչին, Անորմէ պէտք է ելլէ կեանքի և մահուան վճիռը. երկինք և երկիր թէ միանան, թէ բոլոր մարդկային բռնութիւնները, գիտութիւններն ու ճարտարութիւններն իրար խառնուին չեն կարող ասկէջ վերջ ուրիշ օրէնք մը ցուցնել քան Աւետարանինը:

Մի՞ն ուրեմն թող երթանք, ո՞վ ցնորքներով տանջուած գլուխ, թող բնութեան գաղտնիքներուն անկ բաւիղները թող կեանքին պատահարները, մարմնական կիրքերը, ուր պարսպ անդ չարչարուելով կ'ուզես խելք հասցնել թէ ինչո՞ւ այս այսպէս եղաւ, ինչո՞ւ այն այնպէս եղաւ: Ի՞նչ են այս գաղտնիքները, Ի՞նչ է այս թանձր մթութիւնը:

Որքան շնչին է մեր գիտցածը, որքան աշաւոր մեր չգիտցածը: — Մինչեւ երբ, ո՞վ իմ հոգիս, մինչեւ երբ այսպէս ունայն տեղ պիտի թափառես խորհուրդներուդ օձաւ պըտոյտ բաւիղին մէջ, մինչեւ երբ սիրող

քու մէջդ պիտի տագնապի, ահա գրիթէ մաշած է, հիւծած է բոլորովին:

Ամէն շուկի մտիկ կ'ընես, ամէն ձայնի արձագանգ կու տաս. հապա ինչո՞ւ չես հարցնէր, չես լսեր ամենօրեայ ձայնին որ քու ներսէդ կու գայ, թէ, Ի՞նչ կ'ուզես որ երբեք չես գոհանար:

Գէթ անգամ մ'ալ դուն ձայն տուր, կանչէ, թէ «Ճշմարտութիւնը կ'ուզեմ որ գտնեմ և վայելեմ»:

Ահա ճշմարտութեան ձայնը քեզի մօտ է, ահա քովդ է. ահաւասիկ Յիսուս որ կ'ըսէ. «Խո եմ», եթէ գիտ՝ ճշմարտութիւնը կը փնտռես հեռացուր քեզմէ աշխարհի այդ ունայն խորհուրդները: Ինչո՞ւ համար միշտ շուրջը կը դառնաս. ու կեդրոն չես գար. ինչո՞ւ, ո՞վ թերահաւատ մարդ լսելու մարմալէն և կրքերուդ խառնալիքով աղմուկէն կը տարուիս. և Ի՞նչպէս դու համարձակեցար տարակուսիլ թէ արդեօք այս երկրիս վրայ կայ երբեք ճշմարտութիւն:

Կարելի՞ է որ լոյսը ծածկուի, կարելի՞ է որ տիեզերքը շերեւնայ, եթէ երկինք և երկիր ալ խորասոյզ կորուսին ճշմարտութիւնը չի կրնար կորսուիլ:

Որովհետեւ Դս, ճշմարտութիւնս, արուսեակէն ալ առաջ եմ, ես եմ պայծառ աստղը մշտալոյս առաւօտին. Խո ի յաւիտենից աւմէն սկիզբէ առաջ անսկիզբին հետն էի և եմ. ինչպէս լոյսը լոյսէն բխած, գետը աղբիւրէն: Աստուծոյ միտքն եմ, Աստուծոյ Որդին, ամենեւեւ հաւասար Հօր, և Խո ու իմ Հայրս մէկ ենք. Ամէն բան ինծմով եղաւ, և առանց ինծի ոչինչ եղաւ: Դարեբու և աղգեբու այն վաղուց փափաքելին՝ զոր հրեան Մեսիա կը կոչէ, հեթանոսը

Իրիշնորդ, իմաստասէրը Բան, և բոլոր աշխարհ Փրկիչ, այդ ես եմ ահա որ ձեզի հետ խօսիմ, որ Հին ժամանակ ամէն կերպով, ամէն օրինակով խօսեցայ ձեր հայրերուն հետ և ահա դարեր անցնելէն վերջ ես ինքս մարդանալով յայտնապէս խօսեցայ աշխարհի հետ։ Վասն զի ես եմ ճանապարհ ճշմարտութիւն և կեանք։ Ես միայն եմ մարդուն երկրէ երկինք ելլելու ճամբան։ Ես եմ դուռը, եթէ մէկը ինծով մտնէ նա կ'ապրի, կրնայ ելլել ու մտնել և կերակուր գտնել։ Թէպէտ երկրային գձռւէ կերպարանքի տակ շափաւորուած ես անձուկ՝ դուռ մ'իղայ և նեղ ճանապարհ մը, սակայն այս դուռն է միայն որ կը տանի դէպի յաւիտեան կեանքը։ Եկէ՛ք ետեւէս առանց տարակուսելու, ինչպէս Հուս ոչխարներն հովուի ետեւէն։ Որովհետեւ ես մի քաջ հովիւ եմ, և քաջ հովիւը իր անձը կու տայ իրեն ոչխարներուն փոխարէն։ Ես եմ բարի հովիւը... և ես կը ճանչնամ իմիններս ու կը ճանչցուիմ իմիններէս, և իմ անձս կու տամ փոխարէն ոչխարներու։ Ունիմ ես դեռ ուրիշ ոչխարներ ալ որ այս գաւթին մէջը չեն։ Չանչցուք ալ պէտք է հոս բերեմ, ու ձայնս լսեն ու ըլլան մէկ հօտ մէկ հովիւ։... Իմ ոչխարներս իմ ձայնս կը լսեն, ու ես զանոնք կը ճանչնամ, և իմ ետեւէս կու գան ու ես կու տամ իրենց յաւիտեան կեանքը։ ու յաւիտեանս պիտի չկորսուին, որովհետեւ ով որ ինծի կու գայ ես զայն չեմ վռնտեր։ — Ես եմ ճանապարհը։ Ես եմ դուռը։ Ես եմ քաջ հովիւը։ Նայէ՛ մտիւր, վազէ՛ ով տատամսող հոգի։

Ճշմարտութիւնն ես եմ և Ճշմարիտ Լոյսը որ կը լուսաւորէ այն ամէն մարդ որ աշխարհ պիտի գայ։ աշխարհքը մահաբեր մեղքով խաւարած է, որ կեանքին վրայ ստուեր կը ձգէ։ սակայն ինձ խաւարը չի հասնիր։ որովհետեւ ես ինքնին լոյս եմ աշխարհի։ Ով որ իմ ետեւէս կու գայ նա խաւարը չ'երթար, այլ կեանքի ուր կ'ունենայ... Ապա եթէ մէկը զիշեր ժամանակ երթայ նա վար կ'իյնայ, որովհետեւ իրեն հետ լոյս չունի։ Շատ խախուտ է մարդկային կեանքի ճանապարհը ու շատ համառօտ ապրումի

տեղութիւնը։ Գեռ քիչ ժամանակ ալ լոյսը ձեզ հետ է, գացէ՛ք քանի լոյս ունիք ձեզ հետ, մի գուցէ ձեզ խաւարն հասնի, որովհետեւ ով որ մութին մէջէն կը քալէ չի գիտեր թէ ուր կ'երթայ... Ես եկայ աշխարհքի լոյս տալու որպէս զի ով որ ինձ հաւատայ խաւարին մէջ չմնայ, Մարդկային հանճարի բոլոր ճիգերը բաւական չեն ճշմարտութեան փոքրիկ կանթեղ մ'ալ վառել, եթէ վերէն կայծ մը չ'իյնայ իրենց մէջ։ Նոյնինքն մարդարէներու օրէնսդէտներու բովանդակ գիտութիւններն ալ աստղերու պէս թափացած կը նուաղին երբ կը ծագէ արեգակը աւետարանի ընդմէջէն։ որովհետեւ օրէնքները Մովսէսի ձեռքով տրուեցան բայց շնորհն ու ճշմարտութիւնը Յիսուսի Քրիստոսի միջոցով եղան։ Եւ թէ՛ Ես արդէն ասոր մէջ ծնած եմ և ասով եկած աշխարհս, ով որ ճշմարտութեան որդի է կը լսէ իմ ձայնիս։ Մօտեցէ՛ք ինձ, ով խաւարած մտքեր ու լոյս առէ՛ք որպէս զի ամօթով չմնաք։ — Ես եմ ճշմարտութիւնը, Ես եմ աշխարհի լոյսը... Խուսաւորուէ՛ ով օտուերամած հոգի, ճանչցիր քու վախճանդ, նայէ՛՝ երթալիք ճամբադ և զնա՛ փութով։

Ես եմ կեանքը։ Այն կեանքը որ յաւիտեանց էր, Գեանքը որ սկիզբն սուսու ամէն բանի և որուն մասնակից ըրի մարդը, աբարդագործելով զայն իմ պատկերիս նման ու տալով շունչն անմահութեան։ Աստուած չէ ստեղծած մահը, այլ սատանային խաբէութեամբը մահը ծնաւ աշխարհիս մէջ, ու թագաւորեց Արամէն մինչեւ անոր քիւրաւոր սերունդները, բայց Ես եկայ որ մարդիկ վերստին անմահութիւն ունենան, ոչ այնպէս հազարաւոր վտանգներով լեցուն ինչպէս էր Հին ժամանակ, այլ եւս աւելի ամբապնդած յուսով, վերափոխուելու երանական աշխարհները, հոգիին իսկական անմահութիւնը։

Ոչ, ես չ'սպախանեցի անգամ մը պարտադրուած մարդուս երկրաւոր մահը, այլ փոխարէն տանջալից աշխատութիւններուն տուի երեկոյեան խաղաղ ժուռ մը որ աչքերը բանայ շողակաթի գեղազուարճ առաւօտ մը։

Եւս ինքս ալ մահուան փորձէն անցայ, իրապէս և ոչ ստերեոտիթ, ես որ անմահ էի իմ բնութեանս էութեամբը, քու մահկանացու բնութեամբդ մեռայ ու զագաղի մէջ դըրուեցայ եւ որ էի և եմ յարութիւն և կեանք, ինձ Հաւատացողը թէպէտ կը մեռնի, բայց պիտի ապրի, և այն որ իր մէջ կեանք ունի և ինձ կը Հաւատայ, նա յաւիտեան պիտի չմեռնի:

Ո՛վ թշուառ մարդ, մի սարսափիր այլ եւս մահէն, որովհետեւ անոր ճիւղանները ես փշրած եմ, անոր խածուածքը Համբոյր մի՛ է արդարներուն Համար: Խոնարհեցուր գլուխդ, խաչէն կախուած եմ՝ կեանք ունի՜մ դիմացը, և այնպէս յետին շունչդ տուր:

Ա՛հ, մի դողար գերեզմանէն, դու զայն արդէն ամէն քայլափոխիդ կը կոխես. զիս ալ դրին մութ ու խաւար փութին մէջ, ու կարծեցին զիս իրեւ յաւիտեանապէս զըրուածներէն մէկը. բայց ես մահաբեր հողին տակը մտնելով՝ ինչպէս ցորենի մերկ ու մինակ Հասիկ մը, վերստին կենդանացայ ու կեանք տուի Հասկեր ու Հասկեր զարերու սկիզբէն բերատոր մեռածներուն: Այդ օրէն ահա ես կենդանի եմ, և դուք ալ ինձ Հետ կենդանի պիտի ըլլաք:

Այն հոգին որ կը թողու այս աշխարհը նա վերստին կը դառնայ դէպ ի արարչա-գործողն իւր Աստուած՝ վայելելու Համար կենդանարար աղբիւրէն: — Եւս եմ կեանքը: Հաւատա՛ ինձ, ո՛վ մարմնական կրօնով վիւրատրուած հոգի, և այսօր իսկ կարող ես իմ Հետս արթալութեան մէջ լինել:

Դեռ մի քիչ ժամանակ ալ պէտք է որ դու թափառիս այս երկրաւոր կեանքի մէջ. և որպէս զի այդ Համառօտ համբուղ վրայ դուն չիյնաս, չվտանգուիս, եկուր որ քեզ պատրաստած եմ Հաց և իմ զօրութեամբս բխեցուցած կենդանարար աղբիւր մը լուրի: Անոնք որ անմահութեան սահմանուած են պէտք է որ անՀմահական կերակուր ուտեն. և ես ինքզինքս հրաշալի գոյացափոխու-

թեամբ տուի ձեզ զարմանալի կերակուր. «Արեք կիրայլք այս է մարմին իմ... Արեք ի ղմանէ սսկինքին, զի այդ է արին իմ»։ Ընշակեցէք ու տեսէք թէ ես որքան քաղցր եմ: Եւս եմ կենսատու Հացը, ով որ ինձ կու գայ նա չ'անօթեմար, և ով որ ինձ կը հաւատայ ոչ երբեք պիտի ծարաւանայ: Եւս եմ կենսատու Հացը որ երկնքէն է իջած: Այն որ այս Հացէն կ'ուտէ նա յաւիտեանս պիտի ապրի, և այն Հացը որ ես պիտի տամ իմ մարմինս է, զոր ես պիտի տամ աշխարհիս փրկութեան Համար... Այն որ իմ մարմինս կ'ուտէ, այն որ իմ արինս կ'ըմպէ նա յաւիտեանական կեանքին պիտի արժաւանանայ, և ես զայն պիտի յարուցանեմ վերջին օրը...:

Ո՛վ մարդկային հոգի, ո՛վ Աստուծոյ պատուէր, ոչ թէ ներկերուն ստուերներով նկարուած ինչպէս տախտակի կամ պատի վըրայ, այլ իրական, կենդանի հոգեւոր, ինչո՞ւ այդպէս կը դանդաղար, վազէ, միասցիր, խառնուէ՜ քու նախապետիդ Հետ, և կեցիր մնացիր անոր Հետ, ինչպէս գոյն մը անոր ներկերէն, ինչպէս ճառագայթ մը աւնոր շողերէն, կամ ինչպէս ինքն ըսաւ ճիւղ մը որթատունկէն. Եւս եմ ըսաւ ճշմարիտ որթատունկը և դուք ճիւղն էք, այն որ իմ վրաս կեցած է եւ զայն վեր բռնած եմ նա պիտի տայ շատ առատ պտուղ, որովհետեւ առանց ինձի բան մը չէք կրնար ընել... Եթէ իմ վրաս Հաստատուն մնաք և իմ խօսքերս ընդունիք, ինչ որ կ'ուզէք խնդրեցէք և պիտի ստանաք:

Կը լսեն, ո՛վ մարդ, դուն որ կը փափաքիս բարիին, ճշմարտին, գեղեցկին յաւիտեանականին, լսէ՜ թէ ինչ կը խօսի քեզ Հետ Յիսուս: Եւս եմ միայն արտի ծովը լեցնողը, եւս եմ հոգիին Հանգիստը: Եւս Ա և Օ. Ըսկիզբն ու վախճանը, առաջինն ու վերջինը:

(Շարունցակելի)

Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ

(Թրգմ. Հ. Վ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ)